

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**ՏԵՂԵԿԱՑՆՈՒՄ ԵՆՔ, ՈՐ ԱՅՍ ՎԱՐԿԱՏԵՍԱԿՆ ՈՒՆԻ ԲԱՐՁՐ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ: ՈՒՍՏԻ ՆԱԽԱՊԵՍ ԴԻՏԱՐԿԵՔ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԱՌԿԱ ՆՄԱՆԱՏԻՊ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՆԱՀԱՏԵՔ ՎԱՐԿԸ ՄԱՐԵԼՈՒ ՁԵՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:**

**ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԵՐԻ ՏՐԱՍԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

Վարկերի տրամադրման աշխարհագրական շրջանակը	Հայաստանի Հանրապետություն
Տրամադրվող գումարի մեծությունը	նվազագույնը՝ 100.000 ՀՀ դրամ առավելագույնը՝ 15.000.000 ՀՀ դրամ
Տարեկան անվանական տոկոսադրույքը	սկսած 10%-ից մինչև 24%
Տարեկան փաստացի տոկոսադրույք	10.54%-ից մինչև 67.82%
Վարկի ժամկետը	1-ից մինչև 60 ամիս
Վարկի դիմում-հայտի ուսումնասիրության վճար	5.000 ՀՀ դրամ
Վարկի գումարի տրամադրման միջնորդավճար	Տրամադրվող գումարի 0-2 %-ի չափով
Վարկի սպասարկման վճար	Ամսական՝ 0-ից մինչև 5000 ՀՀ դրամ
Վարկի մայր գումարի վաղաժամկետ մարում	Սահմանափակումներ չկան
Վարկառուի այլ ծախսերը	Գրավի առարկայի գնահատման, վերագնահատման, նոտարական, պետական գրանցման և ձևակերպման, ապահովագրական (անհրաժեշտության դեպքում) և դրանց հետ կապված այլ ծախսեր
Վարկային պարտավորությունների կատարման ապահովման միջոցները	Երաշխիք/երաշխավորություն և/կամ անշարժ/շարժական գույք, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված այլ եղանակներ
Վարկային հայտի ուսումնասիրության ժամկետը	1 աշխատանքային օր՝ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո

Տոկոսագումարների հաշվարկման և վճարման կարգը	Տոկոսագումարի հաշվարկը կատարվում է վարկի նվազող մնացորդի նկատմամբ օրական կտրվածքով և ենթակա է վճարման ամսական պարբերականությանը
Ժամկետանց վարկի գումարի գծով հաշվարկվող տույժ	0.13% չափով տույժ ժամկետանց վարկի մայր գումարի նկատմամբ՝ ամեն ժամկետանց օրվա համար
Ժամկետանց տոկոսագումարի գծով հաշվարկվող տույժ	0.13% չափով տույժ ժամկետանց տոկոսագումարի նկատմամբ՝ ամեն ժամկետանց օրվա համար
Տարիքը	Վարկի տրամադրման պահին Վարկառուի տարիքը պետք է լինի նվազագույնը 21, իսկ վարկի մարման պահին չպետք է գերազանցի վարկառուի թոշակի անցնելու տարիքը
Վարկառուի վարկային պատմության հանդեպ պահանջներ	1. Գործող վարկը չպետք է լինի ժամկետանց վարկային պատմության ստուգման պահին: 2. Ժամկետանց օրերի քանակը բոլոր վարկերի գծով վերջին 12 ամիսների ընթացքում չպետք է գերազանցի 30 օրացուցային օրը:
Երաշխավոր	1. Երաշխավոր՝ ցանկացած ֆիզիկական և իրավաբանական անձ 2. Երաշխավորների քանակը՝ մինչև 3 3. Երաշխավորի հանդեպ պահանջներ՝ Վարկառուի հանդեպ պահանջներին համանման
Աշխատանքային ստաժ	1. 6 ամիս չընդհատված աշխատանքային փորձ վերջին աշխատանքային վայրում 2. Հաճախորդի հիմնական աշխատանք չունենալու, թոշակառու կամ ժամանակավորապես անաշխատունակ լինելու դեպքում նա պետք է ունենա այլ եկամուտներ: Եկամուտների տակ հասկացվում են վարձակալությունից ստացված եկամուտները, թոշակները, կազմակերպություն հանձնած բերքի (ապրանքի) դիմաց գյուղատնտեսական եկամուտներ, ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներ, ինչպես նաև այլ եկամուտներ: